ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 253 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԱՅԳԵՀԻՄՆՄԱՆ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1098-Լ որոշմամբ հաստատված «Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական» ծրագրի 25-րդ կետը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքում «Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական» ծրագրի շրջանակներում կապալառուի կողմից կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության նպատակով ստեղծել մոնիթորինգի աշխատանքային խումբ՝ համաձայն կից հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ կապալառուի կողմից կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության նպատակով կատարել այցելություններ՝ յուրաքանչյուր շահառուի տնտեսությունում ամիսը 2 անգամ հաճախականությամբ և համապատասխան տեղեկատվությունն ու լուսանկարները ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-09-25 08:47:25 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-Գ-ի կողմից

2024թ.սեպտեմբերի 24
ք.Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի 2024 թվականի
սեպտեմբերի 24-ի թիվ 253- Ա որոշման

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վաղարշակ Սուքոյան - նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Գրիգոր Փայտյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Արկադի Ամիրխանյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Անդրանիկ Խառատյան - Իջևանի համայնքապետարանի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Անդրանիկ Վիրաբյան – Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի վարչական ղեկավար

Տիգրան Հարությունյան - Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի վարչական Ղեկավար:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

24.09.2024

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241